351 Երկնային լույս է ծագել

1. Երկնային լույս է ծագել
Եվ սրտիս մեջ թափանցել,
Քրիստոս իմ մեջ բնակվեց,
Ծավիղը կյանքիս բացեց:
Հիսուսն է իմ Լույսն անշեջ:
Ալելուիա՛, Իր անվանը փառք հավերժ:

Փրկիչս ինձ պաշտպանում է,
Միշտ հաղթանակով տանում,
Երկնային շատ խոստումներով
Ուրախություն պարգևում (2):

2. Իմ հոգու կերակուրը,
Նաև իմ կյանքի ջուրը
Հիսուսն է ինձ պարգևում
Եվ ինձ դեպ երկինք տանում:
Իր արյունով ինձ մաքրել է,
Ալելուիա՛, և պսակս՝ զարդարել:

3. Թող ամեն լքված հոգի
Աստծո մեծ շնորհքից օգտվի,
Հիսուսի խաչի մոտ գա,
Մեղքերից արդարանա,
Արժանանա նոր կյանքի,
Ալելուիա՛, Աստծո փառքը ժառանգի: